

Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ.

Հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներ

Կրկնվող հետազոտության համեմատական տվյալներ
2014-2017թթ., 2019թ. և 2021թ.

ՎԱՆԱՁՈՐ
2021

Սույն հետազոտությունը պատրաստվել է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Պատասխանատու ոստիկանությանության ստեղծում՝ հիմնված մարդու իրավունքների արժեքների վրա՝ որպես հասարակության վստահության երաշխիք» ծրագրի շրջանակներում՝ Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

Քանակական ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ:

Հետազոտության մեջ տեղ գտած կարծիքները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ.

հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներ:

Կրկնվող հետազոտության համեմատական տվյալներ

2014-2017 թթ., 2019 թ. և 2021թ.

2021թ.-ի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով (Երևան քաղաքում և բոլոր մարզերում) Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի խնդիրներից մեկը եղել է պարզել հասարակության դիրքորոշումները միջազգային կառույցներին՝ Եվրոպական կառույցների (Եվրամիությանը) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հանդեպ, այլ կերպ՝ ՀՀ բնակչության նախապատվությունները դեպի Հյուսիս կամ Արևմուտք Հայաստանի Հանրապետության կողմնորոշման վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է 1200 հոգու շրջանում (95% վստահության միջակայքում, ±2.8% սխալի մեծությամբ), կիսաստանդարտացված հարցազրույցների մեթոդով՝ CAPI-ի տեխնիկայի կիրառմամբ: 2021 թ. ստացված տվյալները համեմատվել են նախորդ հինգ տարիներին (2019, 2014-2017 թթ.) իրականացված նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ:

Միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ՝ 34%-ն այն կարծիքին է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է անդամակցի Եվրոպական կառույցներին (Եվրամիությանը՝ ԵՄ), 15%-ը՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), 27%-ը՝ և՛ Եվրամիությանը, և՛ ԵԱՏՄ-ին, իսկ 11%-ը դեմ է արտահայտվել նշված կառույցներից որևէ մեկին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը: Այս հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 13%-ը:

Համեմատական անցկացնելով նախորդ հինգ տարիների նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ՝ նկատելի է, որ միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ

հարցվածների նախապատվություններում տեղի են ունեցել փոփոխություններ: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ 2019 թ.-ի համեմատ՝ 4%-ով աճել է Եվրոպական կառույցներին անդամակցության կողմնակիցների թիվը, և հակառակ դրան՝ 5%-ով նվազել է Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության կողմնակիցների թիվը: Եթե 2019 թ.-ին, 2017 թ.-ի համեմատ, նվազել էին թե ԵՄ-ի և թե ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցների թվերը, ապա 2021-ին պատկերը բոլորովին այլ է: Հետաքրքրական է, որ այն հարցվողների թիվը, ովքեր կողմ են, որ Հայաստանն անդամակցի և՛ Եվրամիությանը, և՛ ԵԱՏՄ-ին, 2021 թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, նվազել է 3%, իսկ որևէ կառույցի անդամակցել չցանկացողների թիվը, 2019 թ.-ի համեմատ, աճել է 5%-ով: Մինչդեռ 2019 թ.-ին, 2017 թ.-ի համեմատ, գրեթե կրկնակի աճել էր երկու կառույցներին (ԵՄ և ԵԱՏՄ) միաժամանակ անդամակցելու կողմնակիցների թիվը՝ 12%-ից հասնելով 30%-ի:

Այսպիսով՝ վեց տարիների հետազոտությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն 2014 թ. և 2015 թ.-ին է ԵՄ անդամության կողմնակիցների թիվը ավելի քիչ եղել ԵԱՏՄ-ի անդամության կողմնակիցների թվից: 2016 թ.-ից ԵՄ-ին

անդամակցելու կողմնակիցների թիվն ավելին է եղել, քան ԵԱՏՄ-ինը, որի հնարավոր պատճառներից կարող են լինել Հայաստան-Ադրբեջան լարված փոխհարաբերություններն իրենց տարբեր դրսևորումներով՝ սկսած 2016 թ. ապրիլյան պատերազմական գործողություններից, 2020 թ.-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմից, ընդհուպ մինչև 2021թ.-ին ՀՀ պետական սահմանների հանդեպ նկրտումներից: Այդ բոլոր գործընթացների առնչությամբ տարբեր երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանն ու Եվրոպական երկրները, դրսևորել են տարբեր վերաբերմունք երկու երկրների հանդեպ:

ՌԴ-ի նկատմամբ հանրային ընկալման փոփոխության մասին է վկայում 2016 թ., 2017 թ., 2019 թ. և 2021 թ. արված ուսումնասիրությունների արդյունքների համեմատությունն այն հարցի շուրջ, թե ըստ հարցվողների՝ Ռուսաստանի Դաշնությունն ինչպիսի վերաբերմունք ունի ՀՀ նկատմամբ՝ ոչ բարեկամական (թշնամական), թե՝ բարեկամական (Տես Գծապատկեր 2): Ինչպես տեսնում ենք՝ պատերազմական գործողությունների տարիներին էականորեն ցածր է այն մարդկանց թիվը, ովքեր համարում են, որ ՌԴ-ն ՀՀ-ի նկատմամբ ունի բարեկամական վերաբերմունք, և բավականին շատ է այն մարդկանց թիվը, ովքեր համարում են, որ ՌԴ-ն ՀՀ-ի նկատմամբ ունի ոչ բարեկամական (թշնամական) վերաբերմունք:



Կրկնվող հետազոտությունները հնարավորություն են տալիս բացահայտելու ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների թվի կապը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հանդեպ Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) վերաբերմունքի հարցի պատասխանների հետ: Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից՝ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի բարեկամական վերաբերմունքի և ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների թվի միջև:

Դիտարկել ենք նաև միջազգային կառույցներին անդամության վերաբերյալ հասարակական կարծիքի տվյալները՝ ըստ ՀՀ-ի նկատմամբ առանձին երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի և Ֆրանսիայի վերաբերմունքի վերաբերյալ տվյալների:

Գծապատկեր 4. Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մասին հարցվածների ընկալման 2016թ., 2017թ., 2019թ. և 2021թ.



Այսպես՝ համաձայն 2021 թ. հետազոտության արդյունքների (Գծապատկեր 4), ԵԱՏՄ առանցքային նշանակություն ունեցող երկրի՝ Ռուսաստանի Դաշնությանը որպես ոչ բարեկամ (թշնամի) երկիր համարողների 50.5%-ը նախապատվություն է տալիս Եվրոպական միությանը ՀՀ-ի անդամությանը, ի դեպ՝ նրանք 2019 թ.-ին կազմում էին 44.7%, իսկ ԵԱՏՄ-ին՝ 5.8%, որը 2019 թ.-ին 6.6% էր: Ռուսաստանի Դաշնությանը որպես բարեկամ երկիր համարողների 21%-ը (2019 թ.-ին՝ 22.1%) կողմնակից է ԵԱՏՄ-ին անդամությանը, և 28.2%-ը (2019 թ.-ին՝ 28.6%)՝ Եվրամիությանը: Նույն միտումը նկատելի էր նաև 2017 թ. իրականացված հետազոտության արդյունքներում:

Գծապատկեր 5-ում բերված են միջազգային կառույցներին անդամության վերաբերյալ հասարակական կարծիքի տվյալները՝ ըստ ՀՀ-ի նկատմամբ Ֆրանսիայի

վերաբերմունքի վերաբերյալ տվյալների: Այստեղ բացակայում է Հայաստանի հանդեպ Ֆրանսիայի դրական վերաբերմունքի ազդեցությունը՝ Եվրամիությանն անդամակցությանը կողմ լինելու վրա:

Գծապատկեր 5. Միջազգային կառույցներին անդամություն ըստ հարցվածների ընկալման Ֆրանսիայի Հայաստանի հանդեպ վերաբերմունքի 2016թ., 2017թ., 2019թ. և 2021թ.



Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ եթե ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության օգտին հանրային կարծիքի վրա էական ազդեցություն ունի ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի դրական վերաբերմունքը, ապա անկախ ՀՀ-ի նկատմամբ Ֆրանսիայի վերաբերմունքի գնահատականների բնույթից՝ հարցվողների մեծամասնությունը նախապատվություն է տալիս ԵՄ-ին ՀՀ-ի անդամությանը:

Հետազոտության տվյալները դիտարկվել են նաև ըստ հարցվողների մի շարք բնութագրիչների՝ բնակության վայր, սեռ, տարիք և այլն: Ստորև ներկայացված է միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամության նախապատվությունների պատկերը՝ ըստ մարզերի (տես Գծապատկեր 6):

Գծապատկեր 6.

Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ մարզերի

(2021)



Ինչպես երևում է Գծապատկեր 6-ից՝ Եվրամիությանը ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը ամենամեծն է Վայոց Ձորի (66.7%) և Արարատի (54.8%) մարզերում: ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության նախապատվություն տվողները առավել մեծ թիվ են կազմում Արարատի (27%) և Գեղարքունիքի (25%) մարզի հարցվածների շրջանում: Իսկ երկու միջազգային կառույցներին անդամակցելու կողմնակիցների թիվը մեծ է Լոռու (56%), Տավուշի (44%), Սյունիքի (40%) և Արագածոտնի (40%) մարզերի հարցվածների շրջանում: Դիտարկելով ըստ մարզերի ԵՄ-ին ՀՀ անդամության վերաբերյալ 2014-2017 թթ., 2019 թ. և 2021 թ. տվյալները կարելի է նկատել մի շարք միտումներ (տես Աղյուսակ 2):

Դիտարկելով ՀՀ-ի միջազգային անդամության կողմնակիցների թվի փոփոխությունները իրականացված հետազոտությունների ամբողջ

ժամանակահատվածի համար (ներկայացված Աղյուսակ 2-ում), նկատելի է, որ մարզերի մեծ մասում 2021 թ.-ին նվազել է ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը, բացառությամբ՝ Գեղարքունիքի (աճել է 19%-ով), Շիրակի (աճել է 13%-ով) և Կոտայքի (աճել է 4%-ով): Ինչ վերաբերվում է ԵՄ-ին ՀՀ-ի անդամակցության կողմնակիցներին, ապա նրանց թիվը մարզերի կեսում ավելացել է, կեսում՝ նվազել: Այսպես՝ ամենաշատը աճել է Սյունիքում (30%-ով), Վայոց Ձորում (29%-ով), Արարատում (20%-ով) և Գեղարքունիքում (19%-ով): Իսկ ամենաշատը նվազել է Լոռիում:

Եվ ԵՄ-ին, և ԵԱՏՄ-ին անդամակցությանը կողմ արտահայտված հարցվողների թիվն ավելի շատ աճել է Լոռիում (34%-ով), Տավուշում (29%-ով) և Արագածոտնում (27%-ով), իսկ ամենաշատը նվազել է Գեղարքունիքում (36%-ով), Սյունիքում (29%-ով) և Շիրակում (24%-ով):

Այստեղ հետաքրքրական է նաև քննարկել ոչ մի կառույցին ՀՀ-ի անդամակցությունը չնախընտրողների փոփոխությունն՝ ըստ տարիների և մարզերի: 2021թ.-ին ամենաշատը նվազում է տեղի ունեցել Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում (29-ական %-ով), իսկ ամենաշատը նվազել է Լոռիում (15%-ով) և Տավուշում (13%-ով):

Աղյուսակ 1. Եվրոպական կառույցներին (Եվրամիությանը) ՀՀ-ի անդամակցությունը՝ ըստ մարզերի և տարիների

	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2021թ.
Երևան	30%	22.0%	41.0%	35.5%	40.5%	39.8%
Արագածոտն	20%	18.8%	41.7%	22.9%	43.8%	35.4%
Արարատ	16%	28.8%	43.3%	37.5%	34.6%	54.8%
Արմավիր	23%	26.0%	35.6%	34.6%	27.9%	25.0%
Գեղարքունիք	30%	23.8%	43.8%	18.8%	11.3%	30.0%
Լոռի	15%	18.3%	44.2%	32.5%	28.3%	13.3%
Կոտայք	19%	25.0%	43.8%	28.6%	18.8%	34.8%
Շիրակ	21%	29.5%	39.3%	39.3%	16.1%	21.4%
Սյունիք	27%	31.3%	35.4%	16.7%	10.4%	39.6%
Վայոց Ձոր	23%	16.7%	37.5%	20.8%	37.5%	66.7%
Տավուշ	38%	33.3%	39.6%	43.8%	37.5%	25.0%

Աղյուսակ 2. Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ մարզերի 2014-2017թթ., 2019թ. և 2021թ.																		
ԵՄ անդամակցության կողմնակիցներ ըստ մարզերի և տարեթվերի								ԵԱՏՄ անդամակցության կողմնակիցներ ըստ մարզերի և տարեթվերի						Երկուսին էլ (ԵՄ և ԵԱՏՄ) միաժամանակ անդամակցության կողմնակիցներ ըստ մարզերի և տարեթվերի				
	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2021թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2021թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2019թ.	2021թ.
Երևան	30%	22%	41%	36%	41%	40%	30%	34%	22%	30%	21%	17%	13%	16%	7%	11%	19%	19%
Արագածոտն	20%	19%	42%	23%	44%	35%	53%	63%	19%	19%	19%	4%	4%	10%	6%	31%	13%	40%
Արարատ	16%	29%	43%	38%	35%	55%	44%	37%	29%	36%	33%	27%	22%	16%	4%	4%	16%	5%
Արմավիր	23%	26%	36%	35%	28%	25%	45%	23%	26%	24%	16%	8%	9%	22%	7%	23%	30%	31%
Գեղարքունիք	30%	24%	44%	19%	11%	30%	51%	55%	29%	9%	6%	25%	2%	5%	6%	38%	60%	24%
Լոռի	15%	18%	44%	33%	28%	13%	53%	49%	35%	50%	36%	4%	12%	8%	3%	1%	22%	56%
Կոտայք	19%	25%	44%	29%	19%	35%	36%	26%	20%	38%	13%	17%	6%	7%	3%	10%	41%	29%
Շիրակ	21%	30%	39%	39%	16%	21%	39%	33%	31%	37%	6%	19%	14%	6%	7%	5%	56%	32%
Սյունիք	27%	31%	35%	17%	10%	40%	18%	19%	29%	42%	15%	2%	25%	10%	2%	8%	69%	40%
Վայոց Ձոր	23%	17%	38%	21%	38%	67%	41%	38%	21%	46%	33%	13%	27%	21%	13%	25%	13%	4%
Տավուշ	38%	33%	40%	44%	38%	25%	38%	35%	17%	21%	23%	6%	4%	13%	0%	4%	15%	44%

Դիտարկենք նաև միջազգային կառույցներին անդամության նախապատվությունները՝ ըստ հարցվողների բնակավայրերի տիպի (Գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ բնակության վայրի տիպերի

Երևան, այլ քաղաքներ և գյուղեր

2014 թ. Հենք՝ Երևան՝ 442 Այլ քաղաքներ՝ 418 Գյուղեր՝ 440



2015թ.



2016թ.



2017թ. Հենք՝ Երևան՝ 400 Այլ քաղաքներ՝ 464 Գյուղեր՝ 336



2019թ.



2021թ.



Գծապատկեր 5-ից ակնհայտ է դառնում, որ ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը, նախորդ տարվա համեմատ, գրեթե նույնն է մնացել Երևանում, իսկ այլ քաղաքներում և գյուղերում աճել է: ԵԱՏՄ-ի պարագայում այդ կառույցին ՀՀ-ի անդամության կողմնակիցների թիվը նվազման միտում ունի բոլոր տիպի բնակավայրերում: Նրանց թիվն ամենաշատն է նվազել հատկապես գյուղական բնակավայրերում ապրողների շրջանում:

Դիտարկելով միջազգային կառույցներին ՀՀ-ի **անդամության** նախապատվությունները՝ ըստ սեռի, ակնհայտ է դառնում, որ դիտարկված ողջ ժամանակահատվածում (2014-2017 թթ., 2019 թ. և 2021թ.) կա հստակ օրինաչափություն. ԵՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցները մեծամասամբ հանդիսանում են իգական սեռի ներկայացուցիչները, իսկ ԵԱՏՄ-ին՝ արական սեռի ներկայացուցիչները (Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Միջազգային կառույցներին անդամությունն՝ ըստ հարցվողների սեռի





Նկատենք, որ ԵՄ-ին կողմնակից տղամարդկանց թիվը 2021թ.-ին զգալիորեն աճել է նախորդ ուսումնասիրության արդյունքներից՝ մոտենալով կանանց թվին: Թեև ԵԱՏՄ-ին անդամակցությանը կողմնակիցների մեջ ավելի շատ տղամարդիկ են, քան՝ կանայք, սակայն 2019 թ.-ի համեմատ՝ նրանց թիվը զգալիորեն նվազել է:

Հետաքրքիր է, որ 2019 թ. միջազգային կառույցներին ՀՀ-ի անդամության կողմնակիցների «չկողմնորոշվածների» (պայմանականորեն այդպես ենք կոչում այն խմբին, ովքեր գտնում են, որ ՀՀ-ն պետք է անդամակցի և ԵԱՏՄ-ին, և ԵՄ-ին) թվերը բոլոր տարիքային խմբերում նվազել են (Տես Աղյուսակ 3): Բոլոր տարիքային խմբերում նվազել են նաև ԵԱՏՄ-ի կողմնակիցների թվերը: ԵՄ-ի կողմնակիցների թիվն աճել է 18-25 և 46 տարեկանից բարձրերի շրջանում:

Աղյուսակ 3. Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ տարիքային խմբերի																		
	ԵՄ						ԵԱՏՄ						Երկուսին էլ					
	2014	2015	2016	2017	2019	2021	2014	2015	2016	2017	2019	2021	2014	2015	2016	2017	2019	2021
18 -25տ	34%	41%	46%	45%	37%	45%	38%	28%	25%	23%	15%	8%	11%	10%	5%	13%	27%	22%
26 -35տ	32%	28%	42%	34%	36%	35%	33%	29%	23%	28%	17%	14 %	12%	9%	5%	15%	27%	26%
36 – 45տ	27%	28%	45%	36%	35%	35%	41%	34%	22%	28%	20%	17%	11%	9%	5%	10%	23%	21%
46 – 60տ	21%	20%	42%	31%	27%	37%	41%	41%	26%	34%	20%	14 %	12%	15%	4%	13%	34%	29%
61տ և ավելի	17%	17%	34%	25%	23%	30%	37%	41%	29%	41%	23%	17%	13%	16%	8%	11%	33%	32%

Աղյուսակ 4. Միջազգային կառույցներին անդամություն ըստ կրթության															
	ԵՄ					ԵԱՏՄ					Երկուսին էլ				
	2015	2016	2017	2019	2021	2015	2016	2017	2019	2021	2015	2016	2017	2019	2021
Տարրական	0%	0%	38%	20%	13%	67%	40%	50%	10%	50%	0%	0%	0%	20%	13%
Թերի միջնակարգ (8-ամյա)	17%	29%	18%	14%	28%	39%	29%	35%	29%	13%	11%	1%	7%	16%	28%
Միջնակարգ (10-12-ամյա)	25%	41%	32%	36%	33%	38%	25%	32%	20%	13%	9%	4%	9%	24%	27%
Միջնակարգ մասնագիտական (տեխնիկում)	22%	42%	34%	25%	36%	33%	22%	33%	21%	11%	15%	6%	12%	34%	31%
Թերի բարձրագույն	46%	45%	41%	25%	33%	21%	29%	33%	19%	17%	15%	2%	12%	35%	22%
Բարձրագույն	26%	43%	33%	31%	35%	39%	26%	29%	17%	19%	15%	8%	19%	36%	26%
Ետբուհական (գիտական աստիճան)	38%	60%	40%	29%	25%	13%	0%	0%	43%	25%	0%	20%	20%	14%	13%

Աղյուսակ 5. Միջազգային կառույցներին անդամություն ըստ հարցվողների ընտանիքի միջին ամսական եկամտի															
	ԵՄ					ԵԱՏՄ					Երկուսին էլ				
	2015	2016	2017	2019	2021	2015	2016	2017	2019	2021	2015	2016	2017	2019	2021
Մինչև 35000 դրամ	19%	42%	27%	25%	32%	38%	25%	27%	25%	10%	11%	4%	19%	28%	30%
35001-ից մինչև 65000 դրամ	21%	38%	33%	25%	35%	40%	28%	36%	23%	11%	11%	4%	8%	29%	30%
65001-ից մինչև 150000 դրամ	24%	42%	33%	29%	34%	36%	25%	34%	20%	15%	14%	6%	10%	33%	30%
150001-ից մինչև 350000 դրամ	29%	43%	38%	38%	34%	32%	22%	30%	17%	16%	12%	7%	13%	26%	27%
350001 դրամից ավելի	38%	44%	46%	35%	42%	31%	23%	28%	18%	22%	13%	13%	10%	26%	11%

Դիտարկելով ՀՀ-ի միջազգային կառույցներին **անդամության** նախապատվությունները՝ ըստ հարցվողների կրթական մակարդակների, նկատվում են հետևյալ միտումները (Աղյուսակ 4): Նախքան 2021թ.-ի ուսումնասիրությունը՝ ԵՄ-ին անդամակցելու կողմնակիցների աճելու միտումը (2015-2017 թթ. և 2019 թ. ընթացքում) առկա է 3 կրթական խմբերում (տարրական, միջնակարգ (10-12-ամյա), միջնակարգ մասնագիտական (տեխնիկում) և բարձրագույն), իսկ թվերի նվազման միտումն առկա է 3 այլ կրթական խմբերում՝ թերի միջնակարգ (8-ամյա), թերի բարձրագույն և հետբուհական (գիտական աստիճան): ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների թվերում տեղի են ունեցել նվազումներ բոլոր կրթական խմբերում, առավել կտրուկ նվազում տեղի է ունեցել տարրական կրթություն ունեցողների խմբում: 2021թ.-ին, 2019 թ.-ի համեմատ, ԵՄ-ին անդամության կողմնակիցների թիվն աճել է թերի միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում, իսկ ԵԱՏՄ-ին անդամության կողմնակիցների թիվը՝ միայն տարրական կրթություն ունեցողների շրջանում, մյուս բոլոր խմբերի մոտ տեղի է ունեցել նվազում:

Ինչ վերաբերվում է ՀՀ-ի՝ միջազգային կառույցներին **անդամության** նախապատվություններին՝ ըստ հարցվածների միջին ամսական եկամտի, ապա պատկերը հետևյալն է՝ ԵՄ-ին անդակցելու կողմնակիցների թիվը բարձրացել է բոլոր խմբերում՝ բացառությամբ «150000-350000 դրամ» եկամուտ ունեցողների շրջանում (տես Աղյուսակ 5): ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների թիվը նվազել է բոլոր եկամտային խմբերում՝ բացառությամբ «350000 դրամից ավել» եկամուտ ունեցողների:

Այսպիսով՝ դիտարկելով 2014-2017 թթ., 2019 թ. և 2021 թ. հետազոտությունների արդյունքները՝ առանձնացնենք Եվրամիությանն ու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության **անդամության** կողմնակիցների ընդհանրական բնութագիրը (իդեալական տիպերը)՝ ըստ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների (Տես Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Միջազգային կառույցներին ՀՀ-ի անդամության կողմնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ 2021թ.-ին		
բնութագրիչի անվանումը	**Եվրամիություն**	**Եվրասիական տնտեսական միություն**
Տարիք	18-45 տարեկան	61 տարեկանից բարձր
Սեռ	Իգական	Արական
Կրթություն	Միջնակարգից բարձր	Տարրական և հետբուհական
Ընտանիքի միջին ամսական եկամտի չափ	Բոլոր խմբեր	350.000 դրամից ավել

Այսպես՝ Եվրամիությանը ՀՀ-ի **անդամությանը** կողմ են գրեթե բոլոր տարիքային խմբերի ներկայացուցիչները, սակայն ավելի շատ է նրանց թիվը միջինից ցածր տարիքային խմբերում, և իգական սեռի ներկայացուցիչները, որոնք ունեն միջնակարգից բարձր կրթություն:

ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցներն ավելի շատ միջինից բարձր տարիքի են, արական սեռի ներկայացուցիչները, որոնք ունեն կամ տարրական կրթություն կամ հետբուհական, իսկ եկամտի չափը բարձր է 350.000 դրամից:

Մեր կարծիքով՝ ավելի բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչները, որոնք ապրել են ԽՍՀՄ ժամանակաշրջանում, կողմ են արտահայտվում ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամությանը**՝ դրանով իսկ արտահայտելով անցյալի վերականգնման իրենց ձգտումները, ընդ որում՝ որքան մեծանում է հարցվողների տարիքը, այնքան ավելի շատ է նրանց թիվը ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների մեջ:

Այսպիսով՝ 2014-2017 և 2019 թթ.-ի համեմատ՝ 2021թ.-ին փոփոխության են ենթարկվել ՀՀ-ի **անդամության** վերաբերյալ նախապատվություն տվողների սոցիալ-ժողովրդագրական մի շարք բնութագրիչներ: Քանի որ ընդհանուր առմամբ ԵՄ-ի անդամակցությանը, ԵԱՏՄ-ի համեմատ, ավելի շատ են նախապատվություն տվել, ուստի՝ դա դրսևորվում է բոլոր բնութագրիչների առնչությամբ: Մի բան ակնհայտ է, որ ԵՄ-ին անդամակցել ցանկացողների քանակները, ըստ հարցվողների բնութագրիչների ենթախմբերի, այդքան էլ միմյանցից չեն տարբերվում, թեև վերը փորձեցինք որոշակի

առանձնահատկություններ առանձնացնել: Իսկ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների պարագայում որոշակի տարբերություններ կան: Այսպես՝ եթե նախկինում արված հետազոտություններից պարզվում է, որ ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների հիմնական մասը ամենացածր եկամտային խմբին պատկանողներն են, ապա 2021 թ.-ի ուսումնասիրության արդյունքներով պատկերը լիովին այլ է (350.000 դրամ և ավելի եկամուտ):

Հարկ ենք համարում նշել, որ բոլոր հետազոտությունների ընթացքում էլ դրսևորվում է նշանակալի կապ՝ Եվրամիություն/ԵԱՏՄ կողմնորոշումների և քաղաքական իրադարձությունների վերաբերյալ հարցվողների տեղեկատվություն ստանալու աղբյուրների միջև (Գծապատկեր 9):

Գծապատկեր 9. Միջազգային կառույցներին անդամակցությունն՝ ըստ քաղաքական իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրների 2021թ.



Դիտարկենք վերջին երեք ուսումնասիրությունների արդյունքները (Գծապատկեր 10): Եթե 2017թ.-ին *հեռուստատեսությունը* որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 28.0%-ը նախապատվություն էր տալիս Եվրամիությանը ՀՀ-ի **անդամությանը**, իսկ 35.2%-ը՝ ԵԱՏՄ-ին, ապա 2019 թ. նույն հարցվողների խմբի 30.7%-ը կողմ է եղել, որ Հայաստանը անդամակցի երկու կառույցներին, 25.3%-ը՝ ԵՄ-ին, իսկ 22%-ը՝ ԵԱՏՄ-ին: 2021 թ.-ին այդ խմբի հարցվողների 30%-ը կողմ է եղել ԵՄ-ին անդամակցությանը, 31%-ը՝ երկու կառույցներին միաժամանակ, իսկ 16%-ը՝ ԵԱՏՄ-ին:

2017 թ.-ին *տպագիր մամուլը* որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 50%-ը նախապատվությունը տալիս է Եվրամիությանը և ոչ ոք չի նշել ԵԱՏՄ-ին, 2019 թ.-ի հետազոտության տվյալներով՝ տվյալ խմբի ներկայացուցիչների 42.9%-ը նախապատվություն տալիս է ԵՄ-ին և երկու կառույցներին, իսկ 14.3%-ը՝ ԵԱՏՄ-ին, իսկ 2021 թ.-ի հետազոտության տվյալներով՝ 40%-ը կողմ է, որ ՀՀ-ն երկու կառույցներին էլ անդամակցի, իսկ 20-ական %-ը՝ առանձին-առանձին ԵՄ-ին և ԵԱՏՄ-ին:

Գծապատկեր 10. Միջազգային կառույցներին անդամակցությունն՝ ըստ քաղաքական իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրների, 2019թ



2017թ



2017 թ. *առցանց մամուլից* տեղեկություն ստացողների 37.5%-ը նախապատվություն տալիս է Եվրամիությանը, իսկ 28.2%-ը՝ ԵԱՏՄ-ին: 2019 թ.ին 37.3%-ը նախապատվություն տալիս է երկուսին էլ անդամակցելուն, 27.5%-ը՝ ԵՄ-ին, 15.5%-ը՝ ԵԱՏՄ-ին: Իսկ 2021թ.-ին 44%-ը՝ ԵՄ-ին, 24%-ը՝ երկու կառույցներին միաժամանակ, իսկ 10%-ը՝ ԵԱՏՄ-ին:

Այսպիսով՝ եթե նախկինում իշխանությունների կողմից վերահսկվող առավել լայն լսարան ունեցող տեղեկատվության աղբյուրից՝ հեռուստատեսությունից տեղեկություններ ստացողների թվում գերակշռում են ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամության կողմնակիցները, իսկ իշխանության կողմից քիչ վերահսկվող տեղեկատվության աղբյուրից՝ սոցիալական կայքերից տեղեկատվություն ստացողների թվում գերիշխում են Եվրամիության անդամակցության կողմնակիցները, ապա ներկայումս պատկերն այլ է: Հեռուստատեսությամբ ներկայացվում են բազմատեսակ տեսակետներ և տեղեկատվությունը մեկ ուղղությամբ չի ուղղորդվում: Նման իրավիճակներում մեծանում է «և՛ ԵՄ-ին, և՛ ԵԱՏՄ-ին» անդամությանը կողմ արտահայտվածների թիվը: Նույն պատկերն է նաև տպագիր մամուլի կողմից ձևավորած հասարակական կարծիքի

դրսևորումներում: Իսկ առցանց մամուլին հետևողների մեջ շարունակում են շատ լինել Եվրամիության կողմնակիցները:

2017 թ.-ին իրականացված հետազոտության տվյալներով ՀՀ-ի՝ միջազգային կառույցներին **անդամակցելու** նախապատվությունների վրա, ըստ հարցվողների, որոշակի ազդեցություն ուներ նաև Հայաստանի Հանրապետության հանդեպ այդ կառույցների անդամ պետությունների ունեցած վերաբերմունքը: Կապն ուսումնասիրվել է նաև 2021թ.-ին:

2017 թ.-ին Հայաստանի Հանրապետության հանդեպ առավել բարեկամաբար տրամադրված 5 պետությունները, ըստ առաջնահերթության, սրանք էին՝ Ֆրանսիա 77.9%, Ռուսաստան 76.9%, Պարսկաստան 51.8%, Հունաստան 50.1%, Գերմանիա 48.8%, 2019 թ.-ին՝ Ֆրանսիա 87.5%, Ռուսաստան 71.8%, Գերմանիա 65.6%, Հնդկաստան 62.2%, Պարսկաստան 59.2%, ապա 2021թ.-ին՝ Ֆրանսիա 87%, Հնդկաստան 59%, Պարսկաստան 53%, Հունաստան 52%, Ռուսաստան 52%:

Ինչպես տեսնում ենք՝ վերջին ուսումնասիրության տվյալներով փոփոխության են ենթարկվել բարեկամական երկրների ցանկերն՝ իրենց դիրքերով: Էապես նվազել է Ռուսաստանի՝ որպես բարեկամական երկրի ընկալումը (Գծապատկեր 11):

Գծապատկեր 11. ՀՀ-ի հանդեպ այլ պետությունների վերաբերմունքը՝ հարցվողների ընկալմամբ (թշնամի, թե բարեկամ)- 2021թ.



2019 թ.



2017 թ.



Եթե մինչև 2017 թ.-ը ներառյալ իրականացված հետազոտություններին մասնակցած հարցվողների միգարցիոն տրամադրությունները ազդեցություն ունեին ՀՀ-ի միջազգային կառույցներին անդամության կողմնորոշումների վրա, ապա 2021 թ. իրականացված հետազոտության տվյալներով նման միտում չի դրսևորվել: Գծապատկեր 12-ում ներկայացված են հարցվողների միգրացիոն մտադրությունները՝ ըստ տարիների: Ինչպես տեսնում ենք՝ 2019 թ.-ի հետազոտության արդյունքներով արտագաղթել ցանկացողների տոկոսը կտրուկ նվազել է, իսկ չցանկացողների տոկոսը՝ աճել[1]: 2021 թ.-ին արտագաղթելու հաստատակամություն է հայտնել հարցվողների 22.7%-ը, հավանաբար կարտագաղթի 12.4%-ը, հավանաբար չի արտագաղթի 7.7%-ը և միանշանակ չի արտագաղթի՝ 56.5%-ը:

[1] Հարց. «Եթե ունենայիք հնարավորություն, արդյոք կմեկնեի՞ք Հայաստանից դուրս մշտական բնակության»:



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 13-ից՝ ՀՀ-ի՝ ԵՄ-ին անդամակցության կողմնակիցների մեջ ավելի մեծ է արտագաղթելու ցանկություն կամ մտադրություն արտահայտածների թիվը, քան ԵԱՏՄ-ի կողմնակիցների մեջ:



2017 թ. հետազոտության տվյալները ցույց էին տալիս, որ Եվրամիությանը ՀՀ-ի անդամության կողմնակիցների թվում գերակշռում էին արտագաղթելու ցանկություն հայտնողները. «միանշանակ այո»՝ 42.3%, «հավանաբար այո»՝ 19.9%, ընդամենը 62.2%: Արտագաղթելու ցանկություն չհայտնողերը կազմել էին ընդամենը 37.2%: ԵԱՏՄ-ին ՀՀ-ի **անդամության** կողմնակիցների թվում արտագաղթելու մտադրություն ունեցողները («միանշանակ այո»՝ 34.9%, «հավանաբար այո»՝13.9%, ընդամենը՝ 48.8%) և չունեցողները («միանշանակ ոչ»՝ 40.7%, «հավանաբար ոչ»՝ 10%, ընդամենը՝ 50.7%) մոտավորապես հավասար են: 2017 թ.-ին արվել էր եզրահանգում, որ *Եվրամիության անդամակցության կողմնակիցներն ավելի մեծ չափով են հակված արտագաղթելու, իսկ 2019 թ.-ի տվյալներով՝ չկար հստակ կապ արտագաղթելու մտադրության և նախընտրելի անդամության միջև:* **Ինչպես տեսնում ենք՝ 2021 թ.-ին նույնպես դրսևորվում է կապ՝ արտագաղթելու ցանկություն ունեցողների և Եվրամիությանն անդամակցելու կողմնակիցների միջև: Կարելի է ենթադրել, որ պատերազմական գործողություններին հաջորդած տարվա ընթացքում հասարակական տրամադրություններում ակտիվանում են արտագաղթելու մտադրությունները, ընդ որում՝ ոչ դեպի Ռուսաստան:**

Դիտարկելով երկրի ապագայից սպասումների փոփոխությունը տարիների կտրվածքով՝ տեսնում ենք, որ եթե 2019 թ.-ին լավատեսների տոկոսը զգալիորեն բարձրացել էր, ի հակակշիռ վատատեսների, ապա 2021 թ.-ին վատատեսական տրամադրություններն են գերակշռում (Տես՝ Գծապատկեր 14)[2]:

Գծապատկեր 14. Հայաստանի ապագան



[2] Հարց. «Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի ապագան»:

Այսպես՝ 2018 թ.-ին Հայաստանում տեղի ունեցած հասարական-քաղաքական իրադարձությունների և այդ իրադարձությունների հասարակական ընկալումների դրսևորումներում երկրի ապագայի նկատմամբ ձևավորել էին լավատեսական տրամադրություններ, մինչդեռ՝ 2020 թ.-ի պատերազմական իրադրությամբ պայմանավորված՝ այդ տրամադրություններն իրենց տեղն են զիջել վատատեսականներին:

Դիտարկելով երկրի ապագայից սպասումների և ՀՀ-ի նախընտրելի անդամակցության հարցերի խաչաձև վերլուծությունները (Աղյուսակ 7)՝ ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ի երկու միջազգային կառուցներին անդամության կողմնակիցների գերակշիռ մասը 2021 թ.-ին վատատես է երկրի ապագայի հարցում այնպես, ինչպես 2016 և 2017 թթ. արդյունքներով, և ի հակադրություն 2019 թ.-ի հետազոտության արդյունքների: 2021 թ.-ին հետաքրքրական է, որ երկու կառույցներին միաժամանակ անդամակցությանը կողմ արտահայտվածների մեջ շատ են լավատեսները, իսկ ՀՀ-ի՝ ոչ մի կառույցին անդամակցել չցանկացողների մեջ՝ վատատեսները:

Աղյուսակ 7													
Միջազգային կառույցներին անդամություն՝ ըստ ՀՀ-ի ապագայի նկատմամբ դիրքորոշումների													
		Ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի ապագան:											
		2016թ.			2017թ.			2019թ.			2021թ.		
Հայաստանը պե՞տք է անդամակցի...		Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է	Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է	Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է	Գնալով վիճակն ավելի լավանում է	Ոչինչ չի փոխվում	Գնալով վիճակն ավելի վատանում է
	ԵՄ	7.10%	22.80%	70.10%	13.50%	34.40%	52.00%	70.70%	21.30%	8.00%	33.70%	22.50%	43.80%
	ԵԱՏՄ	5.60%	23.80%	70.60%	21.50%	32.00%	46.50%	54.40%	30.00%	15.60%	30.50%	25.40%	44.10%
	Երկուսին էլ	16.70%	27.30%	56.10%	23.10%	38.10%	38.80%	73.10%	21.30%	5.60%	40.20%	28.80%	31.00%
	Ոչ մեկին, ոչ էլ մյուսին	4.60%	18.30%	77.10%	11.90%	28.00%	60.20%	63.60%	25.80%	10.60%	23.60%	31.50%	44.90%
	ԴՊ	7.60%	20.40%	72.00%	16.90%	36.50%	46.60%	64.70%	28.30%	6.90%	29.60%	25.00%	45.40%
	ՀՊ	20.00%	20.00%	60.00%	14.30%	42.90%	42.90%	60.00%	40.00%	0.00%	22.20%	44.40%	33.30%
Ընդամենը		**7.20%**	**22.40%**	**70.40%**	**17.50%**	**33.80%**	**48.70%**	**66.90%**	**24.30%**	**8.80%**	**33.30%**	**26.10%**	**40.60%**